Ծակած տեղերը իսկոյն բորբոքելով՝ սկսում են այրոել: Նրանք ծծում են քո արիւնը եւ փոխարէնը թոյն են թողնում: Մտածում ես, երեւի այդ երկրի ճակատագիրն է՝ ծծել բոլոր հիւթը, կշտանալ, իսկ տեղումը թոյն թողնել...

Բորբոքած օդը բորբոքում է եւ մարդու երեւակայութիւնը: Նայում էի դէպի երկինք, տէր աստուած, ինչե՜ր չէի տեսնում, մի ամբողջ վանք կախուած էր օդի մէջ. ես նշմարում էի՝ մինչեւ անգամ գմբէթները, զանդակատները եւ վանքը շրջապատող ծառերը: Դէպի հեռուն, շատ հեռուն էի նայում, դէպի ծովի կողմը, ինձ թւում էր, թէ երկնային հրեշտակները, զինուորուած, ձի նստած, շրջում են օդի մէջ: Ես տեսնում էի եւ ոչխարների մի ամբողջ հօտ, իրանց արօտամարգերով եւ լեռներով, այնտեղ վերեւում արածում էին: Այդ ի՞նչ էր: Ինձ թւում էր, թէ անրջական տեսիլքներ հրապուրում են ինձ եւ այսպիսի պատկերներ են երեւան հանում: Մտածում էի մեր առաջնորդներին յայտնել տեսածս. երկրի հետ ծանօթ լինելով, գուցէ նրանք կը բացատրէին, թէ ի՞նչ էր այդ: Բայց նրանք ինձ խելագարի տեղ կը դնէին եւ կը սկսէին ծիծաղել: Իսկ վերջը, երբ Ասլանին ասացի, նա բացատրեց այդ օդերեւոյթների բնական պատճառները, եւ ես բոլորովին զարմացայ: Ի՜նչ լաւ բան է եղել գիտութիւնը, որքա՜ն նախապաշարմունքներ, որքա՜ն սնահաւատութիւններ փարատում է նա:

Օրոայ այն ժամն էր, երբ ճանապարհները բոլորովին դատարկւում են երթեւեկներից: Երբեմն պատահում էին մենաւոր ձիաւորներ, երբեմն մի քանիսը միասին: Փոքրիկ, կրակոտ նժոյգների վրայ նստած, երկայն, եղէգնեայ նիզակը ձեռին, երկաթապատ վահանը ուսին, ատրճանակները գօտիի մէջ խրած, աղեղնաձեւ կեռ թուրը կշտից քարշ ընկած, մի խօսքով, կատարեալ զինավառութեան մէջ այդ ձիաւորները իմ վրայ այն տպաւորութիւնն էին գործում, որ կա՜մ կռռելու են գնում, կա՜մ վերադառնում են կռռից. նրանք կասկածաւոր կերպով նայում էին մեզ վրայ, ողջունում էին ու անցնում:

— Դրանք աւազակնե՞ր են, — հարցրի մեր առաջնորդներից մէկին:

— Ի՞նչ է նշանակում աւազակներ, — ժպտալով պատասխանեց նա, — ամէն մի քուրդ աւազակ է, որովհետեւ դա նրա արհեստն է: Դրանք, որ անցան եւ որոնց նորից կը հանդիպենք, հասարակ ճանապարհորդներ են: Եթէ ճանապարհին իրանց ատամի համեմատ մի որս կը պատահի, կը կողոպտեն եւ կանցնեն, իսկ եթէ նկատեն, որ որսը հեշտութեամբ կեղեքել չեն կարող, կողջունեն ու այնպէս կանցնեն:

— Ուրեմն դրանք մեզ կը կողոպտէին, եթէ մենք զէնքեր չունենայինք:

— Անպատճառ: